

Ֆ. ԲՈՒԴՆԻԿՈՎ



087.1
F-91

ՊԵՏՂՐԱՏ

23 JUN 2009

A P M.
3-683a

Ֆ. ԲՈՒԴՆԵԿՈՎ

027.1
P-91

**Ի Ն Ք Ն Ա Գ Ո Ր Ծ
Հ Ե Ռ Ա Դ Ի Տ Ա Կ
Յ Ե Վ Մ Ա Ն Ր Ա Դ Ի Տ Ա Կ**

3088



ՈՊՏԻԿԱԿԱՆ (ԴԻՏԱԿԱՆ) ԱՊԱԿԻՆԵՐ

Ավելի քան յերեք հարյուր տարի սրանից առաջ հռչակա-
վոր գիտնական Գալիլեյը մի գիտակ շինեց: Այդ առաջին գիտակն
այն ժամանակվա համար շժմեցուցիչ գյուտ էր:

Այդ մասին հաղորդելով՝ Գալիլեյն այդ գյուտն անվանում է
«մեծ» և «զարերից ի վեր չլաված»: Իսկ հիմա գիտակն ամեն-
քին լավ հայտնի յե բինոկլ (յերկփող գիտակ) անունով: Բինոկլը
— դա Գալիլեյի յերկպատկած խողովակն է:

Յեթե բինոկլի միջով նայելու լինենք վորևե հեռավոր առար-
կայի, որինակ՝ մի ծառի, այնպես կթվա, թե անհամեմատ մոտե-
ցավ այն: Հիմա նրա կեղևի վրա կարելի յե նկատել արդեն ճեղ-
քեր, իսկ սոսկ աչքով դրանք չեյին յերևում: Ուստի ասում են,
թե բինոկլը «մոտեցնում» կամ «մեծացնում» է առարկաները:

Շատ մանր առարկաները դիտում են խոշորացնող ապակու-
կամ «խոշորացույցի» միջով: Ահա սողում է մի մանրիկ ժժմակ
(պտտիկ միջատ): Նա հազիվ է յերևում: Բայց նայեցեք նրան
խոշորացույցի միջով— կտեսնեք մազմզոտ թաթիկները, փոքրիկ
ընչացքները և գլխի վրայի աչիկները:

Իսկ ապակիներն ինչո՞ւ յեն «մեծացնում» առարկան:

Ի նկարում ցույց են տրված յերկու միատեսակ հեռազրա-
սյուններ, մարդու աչքից մեկը հեռու, մյուսն ավելի մոտ: Այսուհանդերձ
վերջավորություններից աչքի մեջ ընկնող ճառագայթներն ան-
կյուններ են կազմում: Մոտիկ սյունից առաջացող անկյունն
ավելի մեծ է, քան հեռու սյունից գոյացածը:


Կամ նայեցեք այս գրքի առաջին էջը: Վերնագրի տառերը
խոշոր են, իսկ բնագրինը մանր. վերնագրի տառերից (գլխատա-
ռերից) յեկող ճառագայթները կազմում են ավելի մեծ ան-
կյուն, իսկ բնագրի տառերից յեկողներն— ավելի փոքր անկյուն:



4919-87

Վորպեսզի հեռավոր սյուշնն ավելի մոտ յերևա կամ փոքր առարկան ավելի մեծ, հարկավոր է ճառագայթներից դոյացող անկյունը մեծացնել:

Գալիլեյը գտավ այդ անկյունը մեծացնելու հնարը՝ ողորդվելով ապակիների մեջ լույսի ճառագայթների բեկվելուց: Գալիլեյի խողովակում (դիտակում) յերկու ապակի կա—մեկն ուռուցիկ և մյուսը գոգավոր: Այդ խողովակն այնքան էլ շատ չէր մեծացնում իրը:



Նկ. 1


Այդ դյուսն անելուց յերկու տարի անց—1611 թվականին—այդ ժամանակի մի ուրիշ գիտնական—Կեպլերը—այլ կառուցվածք ունեցող մի խողովակ հնարեց: Իս շատ ավելի յեր մեծացնում, քան Գալիլեյինը, և բոլոր գիտնականներն սկսեցին սգովել հենց այդպիսի խողովակից:

Կեպլերի խողովակումն էլ յերկու ապակի կա, միայն թե դրանք յերկուսն էլ ուռուցիկ են: Տեսնենք, ինչպես են գործում այդ ապակիները կամ՝ ինչպես անվանում են՝ այդ լինդերը (տեսապակիները):

Մութ սենյակում սեղանին դնենք մի վառած մոմ: Մոմից վորոշ հեռավորության վրա տեղավորենք լինդը: Այդ ժամանակ լինդի հետևում դրված ճերմակ ստվարաթղթի կտորի վրա մի լուսավոր յերկարավուն բիծ յերևան կգա: Թեթևակի մոմը փչեցեք—բոցը կատասնվի, բիծը նույնպես: Բայց ապա մի լինդը քիչ մոտեցրեք ստվարաթղթին—կտեսնեք, վոր բիծն ավելի ցայտուն դարձավ: Իս մոմի պատկերն է, միայն թե բոցի կողմը գլխիվայր դարձրած. դա կոչվում է իրական պատկեր (նկար 2):

Իրական պատկերի՝ լինդից ունեցած հեռավորությունը կոչվում է կիզակետային հեռավորություն: Առանց լինդին ձեռք տալու՝ մոմը մոտեցնենք ապակուն—պատկերը կաղտտանա: Վորպեսզի վորոշակի դարձնենք այն, պետք է ստվարաթուղթը հեռացնենք.


կտեսնենք, վոր կիզակետային հեռավորությունն ավելի յե յերկարել: Մոմը լինդից հեռացնենք—հարկ կլինի ստվարաթուղթը մոտեցնել ապակուն. կտեսնենք, վոր կիզակետային հեռավորությունը կարճացավ:



Նկ. 2

Ստվարաթղթի վրայի մոմը միանգամայն նման է իսկականին, բայց ստվարաթուղթը դրանից չի վառվում: Իսկ ապա մի լինդը դրեք ստվարաթղթի և արևի միջև: Ստվարաթղթի վրա լուսավոր բիծ յերևան կգա, ինչպես վոր եր մոմի դեպքում: Լինդն ստվարաթղթին մոտեցնենք այնպես, վոր բիծը փայլուն կետ դառնա: Ապա միքիչ այդպես պահեցեք, կտեսնեք, վոր ըստվարաթուղթը վառվեց: Այդ կետն արեգակի պատկերն է: Արևը մոմից շատ-շատ անգամ ավելի պայծառ է. մոմի ճառագայթներից թուղթը չէր վառվում, բայց լինդի ժողոված արեգակնային ճառագայթները վառեցին թուղթը: Լինդից մինչև փայլուն կետը—արևի պատկերը—յեղած տարածությունը կոչվում է գլխավոր կիզակետային հեռավորություն: Նույն հեռավորության վրա կտեսցվի լուսնի պատկերը, աստղերինը, բոլոր խիստ հեռու առարկաներինը: Գլխավոր կիզակետային հեռավորության յերկարությունը հեշտ է չափել քանոնով (նկ. 3):


Առարկան վորքան մոտ լինի գլխավոր կիզակետից, այնքան ավելի մեծ կլինի նրա պատկերը լինդի հետևում:



Նկ. 3

Լինդի գլխավոր կիզակետի մոտ գետեղված մի շատ փոքրիկ առարկայից խիստ խոշորացված իրական պատկեր կստացվի:


Առարկան ավելի մոտեցրեք գլխավոր կիզակետին, և պատկերը կջքանա: Հիմա մոտիկ տվեք լինդի միջով և դուք կտեսնեք առարկան խոշորացած տեսքով (նկ. 4): Միայն թե լինդի միջով յերբեք արեվին չնայեք. սարսափելի ուժ ունեցող ճառագայթներն անմիջապես կկուրացնեն:



Նկ. 4

Լինդերի կիզակետային հեռավորությունները տարբեր են լինում. քիչ ուռուցիկ ապակուներ յերկար և, իսկ շատ ուռուցիկ ապակուներ՝ կարճ:

Կեպլերի խոզովակը կամ հեռագրական այսպես և գործում. առաջին լինդը, վոր կիզակետային յերկար հեռավորություն ունեցող մի որյեկտիվ (զիտապակի) և, տալիս և հեռացված առարկայի փոքրիկ, գլխիվայր իրական պատկերը (նկ. 5) ճիշտ այնպես, ինչպես մոմի պատկերը մուժ սենյակում: Այդ «իրական» պատկերը զիտում են խոշորացնող լինդի միջով, վորը խիստ կարճ կիզակետային հեռավորություն ունի: Յերկրորդ լինդը կոչվում է ոկուլյար (ակնապակի):



Նկ. 5

Մոդովական ուղղենք մի հեռավոր ծառի: Մոդովակում որյեկտիվը կտա ծառի պատկերը գլխիվայր: Յեթե ծառին նայելու լինենք սոսկ աչքով, ծառը կտեսնելինք այն անկյան տակ, վոր գծված է aa աղեղով: Ոկուլյարի միջով ծառը տեսնում ենք bb աղեղով գծված անկյան տակ: Տեսողության անկյունը մեծացավ, և ծառն սկսեց մոտիկ թվալ:

Մոշորանալու պատճառը կարելի յե այսպես ևլ բացատրել:

Յերևակայեցեք, վոր ծառի փոքրիկ պատկերին մի մարդ նայում է որյեկտիվի միջից, մի ուրիշն ոկուլյարի միջից: Պատկերը վոքտեղից ավելի մեծ կթվա:—Իհարկե՝ ոկուլյարից: Իսկ քանի՞ անգամ մեծ կթվա:—Այնքան անգամ, վորքան անգամ ոկուլյարն ավելի մոտ է պատկերին, քան որյեկտիվը, կամ՝ վորքան անգամ ոկուլյարի կիզակետային հեռավորությունը կարճ է որյեկտիվի կիզակետային հեռավորությունից: Յեթե որյեկտիվի կիզակետային հեռավորությունը 100 սանտիմետր է, իսկ ոկուլյարինը 2 սմ, զիտակը կխոշորացնի 50 անգամ:

Վորպեսզի մեծ խոշորացում ստանանք, պետք է վերցնել մեծ որյեկտիվ կիզակետային յերկար հեռավորությամբ:

Աշխարհում ամենամեծ որյեկտիվ ունեցող զիտակը գտնվում է Ամերիկայում Չիկագո քաղաքի մոտի զիտարանում: Այդ զիտակի որյեկտիվի տրամագիծը 100 սմ է: Մեզ մոտ Պուլկովի զիտարանում մի զիտակ ունի 76 սմ որյեկտիվ և 13 մետր կիզակետային հեռավորություն: Վերջին յերեսուն տարում վոչվոր նույնիսկ չի փորձել ավելի մեծ որյեկտիվ շինել, այնքան դժվար խնդիր է դա:


Ամենամեծ հեռագրականները կարող եյին մինչև 6.000 անգամ խոշորացում տալ, բայց գործնականորեն յերեք չեն ոգտվում ավելի մեծ խոշորացումից, քան 300—500 անգամ:

Բայց ինչո՞ւ Լուսնին չնայել 6.000 անգամ խոշորացումով: Վորքան հեռաքրքիր բան կարելի յեր տեսնել այնտեղ: Բանից գուրս է զալիս, վոր չի կարելի. խանդարում է ողբ: Ամենամանրիկ փոշիները 6000 անգամ խոշորացնելուց բոլորովին պղտորում են զիտակի միջի պատկերը, իսկ ջերմ ողի կոհակները «տատանում» են պատկերը:

100—200 անգամ խոշորացնելուց փոշին ամենեկին չի խանգարում, և պատկերը պարզորոշ է ստացվում: Ահա և՛ գուրս է զալիս, վոր պակաս խոշորացնելով կարելի յե ավելի տեսնել:

Մեծ խոշորացումների համար կան և՛ այլ խոչընդոտներ: Գուք զիտակով նայում եք, և հանկարծ պատկերը զեն է ցատկում, կտես սարսափելի յերկրաշարժ պատահեց: Մի զարմանաք. դա մոտիկ տեղով մի ապրանքատար ավտո սլացավ: Հողի՝ մեղ համար աննկատելի յերերումը զիտակի համար կատարյալ յերկրաշարժ է. ուստի զիտարանները կառուցում են քաղաքներից և յերկաթուղիներից հեռու, իսկ մեծ հեռագրականներն ամրացնում են ամուր, քարե հիմքերի վրա:

Յերկրի մակերևույթի հեռավոր առարկաներն, որինակ՝ ծովում հեռու գտնվող նավը, դիտում են ընդամենը 10—15 անգամ խոշորացնող դիտակներով: Տելեսկոպը (հեռագիտակն) այդ նպատակի համար անհարմար է. նայում ես մարդուն, տեսնում ես՝ գլխի վայր է ման գալիս: Բայց այդ պակասությունն ուղղելը դեռ հեշտ է, հարկավոր է միայն դիտակի մեջ մի լինդ կա ղնել: Դա մի անգամ ևս շուտ կտա պատկերը, և մարդը դիտակի մեջ ճիշտ կերևա: Յերեք ապակու դիրքը ցույց է տրված 6-րդ նկարում:



Նկ. 6

Յեթն վերցնելու լինեք վորեն դիտակ և ուղղեք Լուսնին, դուք միայն մի անորոշ լուսավոր բիծ կտեսնեք: Կարծում եք՝ դիտակը փշացած է: Վոչ, նա միայն «կիզակետի վրա չի դրված»: Որչեկտիվից պատկերն ստացվել է խողովակում իր տեղը, բայց սկուլյարը ճիշտ չէ դրված. պետք է սկուլյարն այնպես ղնել, վոր նա ավելի մոտ լինի պատկերին, քան թե նրա գլխավոր կիզակետային հեռավորությունը: Լուսնի և աստղերի պատկերները դիտակում ստացվում են որչեկտիվից միշտ նույն հեռավորության վրա, ուստի հարկ է լինում սկուլյարը շատ քիչ տեղափոխել: Բայց այ, դիտակն ուղղեցեք մի մոտիկ առարկայի, որինակ՝ հարևան այգու մի ծառին: Դիտակում պատկերը կստացվի որչեկտիվից շատ ավելի հեռու: Այն տեսնելու համար հարկավոր է սկուլյարն որչեկտիվից ավելի հեռացնել:


Ուստի յերկնային դիտակը շինում են մի քանի խողովակներից բաղկացած, վորոնք իրար մեջ են մտնում:

Լինդերը մոշ միայն բեկանում են լույսի ճառագայթները, այլև դրանց կազմալուծում են բաղադրիչ գույների: Ուստի դիտակում պատկերների յեզրերը գունավորված են լինում: Վորպեսզի այդ չլինի, հարկավոր է ծայրի ճառագայթները բռնել: Որչեկտիվի վրա յեն հազցնում մեջտեղից ծակ մի սովաբաթղթի շրջանակ: Ծակը պետք է որչեկտիվի տրամագծից փոքր լինի: Այդպիսի շրջանակը կոչվում է ստոմանի (դիաֆրագմա): Դա պատկերները

պարզորոշ է դարձնում, բայց և միևնույն ժամանակ թուլացնում է լույսի ուժը խողովակում (դիտակում):

Դիտակը յերկնային ուղղելով՝ կարելի չէ տեսնել նրա մի փոքր մասը միայն: Այդ մասը կլինի դիտակի «տեսագաշտը»: Վորքան ավելի մեծ խոշորացում է տալիս դիտակը, այնքան ավելի փոքր տեսագաշտ է ստացվում:

Ամենապարզ մանրադիտակը (միկրոսկոպը)—խոշորացույցը—բաղկացած է սև շրջանակով պատած մեկ լինդից (նկ. 7): Կան և՛ բարդ խոշորացույցներ. դրանք բաղկացած են մետաղե փոքր խողովակում դրված յերկու ապակուց, տուփով (նկ. 8): Յերկապակյա խոշորացույցը գործում է միապակյայի նման՝ շատ կարճ կիզակետային հեռավորությամբ:



շրջանակ

լինդա



Նկ. 7

Նկ. 8

խոշորացույցն այնքան էլ մեծ խոշորացում չի տալիս, իսկ մանրադիտակը աստիկ ուժեղ է խոշորացնում: Նրա միջով կարելի չէ տեսնել այնպիսի առարկաներ, վորոնք սոսկ աչքով բոլորովին չեն տեսնվում:

Մանրադիտակն էլ է բաղկացած յերկու ապակուց, բայց դրանք այլ կերպ են դրված: Առաջին ապակին որչեկտիվն է: Դիտվող առարկան դրվում է որչեկտիվի գլխավոր կիզակետից շատ քիչ հեռու: Որչեկտիվից ստացվում է դիտվող առարկայի խիստ խոշորացված պատկերը: Այդ պատկերը դիտում են մյուս խոշորացնող ապակու—սկուլյարի միջով: Առարկան կերևա էլ ավելի խոշորացված տեսքով (նկ. 9):



Նկ. 9

Ուժգին խոշորացումների դեպքում առարկան պետք է լավ լուսավորված լինի. առանց դրան նա պարզ չի յերևա: Առարկան լուսավորելու համար նրա վրա յեն ուղղում արելի լույսը փոքրիկ հայելու միջոցով:

50—60 անգամ խոշորացնող հեռագիտակ յուրաքանչյուրը կարող է ինքը շինել: Հարկավոր է միայն որյեկտիվ և ոկուլյար ձեռք բերել:

Ակնոցի կլոր ապակին կարող է ծառայել իբրև հիանալի որյեկտիվ: Ճիշտ է, փոքր է այն և շատ լույս չի հավաքի, բայց դրա փոխարեն ակնոցի ապակին սովորաբար շատ բարակ է և նրանում լույսի կորուստը մեծ չէ: Դա որյեկտիվի համար առավելութունն է:

Ակնոցի ապակի կարելի չէ ճարել ամեն մի սպտիկական խանութում: Միայն թե կլոր պետք է լինի այն, վոչ թե ձվաձև. ձվաձև ապակին փոքրիկ առարկաների ճշգրիտ պատկերը չի տա:


Ոպտիկական խանութներում ակնոցի ապակիները տարբերվում են վոչ թե կիրակետային հեռավորությամբ, այլ «դիոպտրիաներով»: Վերջան մեծ է դիոպտրիան, այնքան կարճ է կիրակետային հեռավորությունը: 1 դիոպտրիանոց ապակու կիրակետային տարածությունը 100 սմ է. 4 դիոպտրիանոց ապակու կիրակետային հեռավորությունը 25 սմ է:

Իսկ քանի՞ դիոպտրիա պետք է ունենա մեր որյեկտիվը: Իմանալը հեշտ է: 100-ը բաժանեցեք կիրակետային հեռավորության վրա—կստանաք դիոպտրիաների թիվը. $100 : 75 = 1,3$ դիոպտրիայի: Ոպտիկական խանութում այսպես էլ հարցրեք. ակնոցի կլոր ապակի 1,3 դիոպտրիանոց:

Ոկուլյարի համար ամենից լավ է վերցնել պատրաստի բարդ խոշորացույց: Դա փոխարինում է շատ կարճ կիրակետային հեռավորություն ունեցող մի ապակուն: Դա էլ կարելի չէ գտնել սպտիկական խանութում: Յեթե բարդ խոշորացույց չլինի, պետք է ձեռք բերել 1,5 սմ կիրակետային հեռավորություն ունեցող մի փոքրիկ ապակի:


Որյեկտիվը խողովակի (գիտակի) մեջ դնելը շատ հասարակ բան է: Պետք է վերցնել մոտավորապես 7,5 սմ տրամագիծ և 10—15 սմ յերկարություն ունեցող մի կլոր ստվարաթղթի տուփ առանց կափարթչի: Այդպիսի տուփերով սուրճ ու կակաոյեն վաճառում: Տուփի հատակի կենտրոնում բաց արեք մի կլոր

ծակ, վորը մի քիչ ավելի փոքր տրամագիծ ունենա, քան որչեղ-
տիվի ապակին: Տուփի հատակի նման տրամագիծ ունեցող մի
շրջանակ կտրեցեք ստվարաթղթից: Շրջանակի մեջ տեղը նույն-
պես կլոր ծակ բաց արեք ճիշտ որչեղտիվի ապակու տրամագծի
համեմատ: Կստացվի տափողակ (շայրա): Դա պետք է դնել և
կպցնել դրսից տուփի հատակին այնպես, վոր հատակի ծակի
կենտրոնը տափողակի ծակի ուղիղ կենտրոնի վրա գա: Կստաց-
վի մի խորություն (խոռոչ), վորի մեջ շատ հարմար կերպով
դրվում է որչեղտիվը (նկ. 10):



Նկ. 10

Որչեղտիվի և տափողակի վրայից տուփի հատակին կրպ-
ցրեք բարակ ստվարաթղթի մի տափողակ և: Այդ տափողակի
ծակի տրամագիծը պետք է հավասար լինի տուփի հատակի ծակի
տրամագծին: Խողովակի ծայրին կպցրեք շուրջանակի բարակ
ստվարաթղթի մի շերտիկ (նկ. 11):



Նկ. 11

Խողովակի իրանի համար վերց-
րեք բարակ ստվարաթուղթ կամ
զծագրության թուղթ: Դրանով
փաթաթեցեք որչեղտիվ պարու-
նակող տուփը (նկ. 12), և խողո-
վակ կստացվի: Խողովակի յեր-
կարությունը պետք է հավասար
լինի որչեղտիվի կիզակետային հեռավորությանը: Յեթե որչեղտիվի
կիզակետային հեռավորությունը 75 սմ է, նշանակում է՝ խո-
ղովակն էլ նույնպիսի յերկարություն ունեցող պիտի լինի: Մի-
այն չմոռանաք խողովակը ներսից ներկել սև ներկով կամ տու-
շով, թե չե պատերից արտացոլող լույսը կփչացնի պատկերը:


Գնովի խոշորացույցը (ոկուլյարի համար) ձխնիով (շաքնի-
րով) միացած է մետաղե պատյանի (ֆուտլյարի) հետ (նկ. 8):
Պատյանը հարկավոր չե, սոցցով կտրեցեք: Դա հեշտ է կատարել



Նկ. 12

նրբաողոցով: Կննա յերկու ապակի ունեցող մի կարճիկ խողո-
վակ: Դա պետք է դնել 10-15 սմ յերկարություն ունեցող
տուփի հատակում: Այդ տուփը պետք է նույնպիսի տրամագիծ
ուսենա, ինչպիսին է՝ որչեղտիվի համար վերցրածը: Դա պետք է
մտնի խողովակի մեջ:

Խոշորացույցը տուփի հատակում դնելու համար ստվար-
թղթից մի քանի հատ տափողակ կտրեցեք: Տափողակների ծակե-
րը շինեցեք խոշորացույցի արտաքին տրամագծի համեմատ:
Տուփի հատակը ծակեցեք խոշորացույցի ապակիների տրամագծի
համեմատ: Տափողակները կպցրեք տուփի հատակին: Հիմա հեշտ
է խոշորացույցը տեղը դնել (նկ. 13) և սոսնձով կպցնել այն: Դի-
տակը պատրաստ է:




Նկ. 13

Դա 50-60 անգամ կխոշորացնի: Դա ձեռքում բռնած անկա-
րելի յե յերկինքը դիտել, այդպիսի խոշորացման դեպքում ձեռնե-
րի ամենափոքր զոդոցը պատկերին ցատկել և տալիս տեսողաշար:
Ուստի դիտակը պետք է դնել շտատիվի (նեցուկի) վրա: Դա այսպես
կարելի յե անել: 50-60 սմ յերկարություն ունեցող փայտե
նեղիկ քանոնի լայնությամբ պետք է մի կլոր առանցք ամրաց-
նել: Խողովակի (դիտակի) իրանը սոսնձով կպցնում են այդ քա-
նոնին: Ավելի դիմացկուն լինելու համար խողովակի և քանոնի
ծայրերին կտրեղեն կպցրեք (նկ. 14):


Առանցքը պետք է խողովակի յերկու կողմից 3-4 սմ
գուրս գա:

Խողովակը վեր ու վայր կպտտվի այդ հորիզոնական առանցքի շուրջը: Բայց դրա հետ միասին նա պետք է ամեն մի դիրքում կանգնի ել: Դա ևս դժվար բան չէ:



Նկ. 14

Փաներայից (զրվազաթերթից) յերկու շրջանակ կտրեցեք սղոցով՝ յուրաքանչյուրը 15 սմ տրամագծով: Իրանք սոսնձով կպցրեք յեռանկյունի ձև ունեցող մի փայտի կտորի (նկ. 15):



Նկ. 15

Այդ փայտի յեռանկյունին պետք է դնել 10-15 սմ յերկարություն ունեցող մի կարճ ուղղաձիգ առանցքի վրա: Դիտակը (խողովակը) այդ առանցքի շուրջը կպտտվի աջ ու ձախ: Յեռանկյունու հաստությունը պետք է այնպես լինի, վոր խողովակի իրանը թեթև շփումով պտտվի ֆաներային շրջանակների միջև: Շրջանակներին շփվելը խողովակը կպահի՝ ուղած դիրքում: Շտատիվի համար վերցրեք 15-20 սմ հաստություն ունեցող մի փայտի կտոր: Այնպիսի յերկարությամբ փայտ ընտրեցեք, վոր շտատիվը սեղանին դրված ժամանակ խողովակի միջով նայելը հարմար լինի:

Չողիկի ստորին ծայրին՝ մեխեցեք մի խաչմերուկ. վերին

ծայրին ամրացրեք մի կարճ, կլոր խողովակ կամ թիթեղե պահուսակ: Պահուսակը ցույց է տրված 16-րդ նկարում:

Դիտակի ուղղաձիգ առանցքը դրվում է պահուսակի մեջ: Այժմ կարող եք այն հեշտությամբ դարձնել (պտտել) հորիզոնական և ուղղաձիգ առանցքների շուրջը: Դա բավական է դիտակը յերկնքի ուղած կետին ուղղելու համար (նկ. 17):

50 անգամ խոշորացնող խողովակը (դիտակը) կարելի չէ ձեռքով ղեկավարել: Ավելի մեծացնող դիտակը ղեկավարելն այնքան էլ հեշտ բան չէ: Իրա համար հարկավոր հարմարանքներ դժվար կլինի շինել ամեն մեկին անձամբ:

Յերբ դիտակ կալատրաստեք, աշխատեցեք, վոր որչեկտիվի և սկուլյարի կենտրոններն ընկնեն ձիշտ մի ուղիղ գծի վրա: Յեթև պատկերների յեղբերը պարզ չլինեն, պետք է որչեկտիվի վրա դիաֆրագմա (ստոծանի) քաշել: Դիաֆրագման կտրում շինում են բարակ ստվարաթղթից կլոր ծակով, վորն ավելի փոքր է լինում, քան դիտակի (խողովակի) ծակը: Դիաֆրագման հազընում են կափարիչի պես (դրսից) որչեկտիվը պարունակող խողովակի ծայրին:



Նկ. 16

100 : 15 = 6,7 դիտարիա: Խանութում պահանջեցեք 6-7 դիտարիանոց սպակի: Ոկուլյարի համար վերցրեք 1, 5 սմ կիզակետային հեռավորություն ունեցող ուսուցիկ սպակի կամ այնպիսի բարդ խոշորացույց, ինչպիսին և՛ հեռադիտակի համար եք:

Որչեկտիվը պարունակող ստվարաթղթի խողովակը 40 սմ յերկարությամբ պատրաստեցեք:

Դիտակում պատկերը շուռ տալու համար պետք է որչեկտիվի և սկուլյարի արանքում մի սպակի ևս գետեղել: Ծարեցեք շատ կարճ, որինակ՝ 5-6 սմ (15-20 դիտարիանոց) կիզակետային

հեռավորութիւնն ունեցող ակնոցային ապակի: Ուղեկախի վր գիտա-
կում «Իրական» պատկերն է տալիս: Յերկրորդ լինդը կրկնում է
այն և շուտ է տալիս (նկ. 6): Ոկուլյարում պատկերը զիտում են
հավելյալ լինդից:

Հավելյալ լինդը և սկուլյարը զրեք կարճ խողովակի ծայրե-
րում: Խողովակի յերկարութիւնը մտտավորապես հավասար է
հավելյալ լինդի կրկնակի կիզակետային հեռավորութեանը պլուս
սկուլյարի կիզակետային հեռավորութեան յերկու յերրորդը: Հա-
վելյալ լինդի 5 սմ կիզակետային հեռավորութեան և սկուլյարի
1, 5 սմ կիզակետային հեռավորութեան դեպքում խողովակի յեր-
կարութիւնն ստացվում է $5 \times 2 + 1 = 11$ սմ: Հավելյալ լինդի և
սկուլյարի միջև տարածութիւնը մնում է անփոփոխ: Ավելի
ճշգրիտ՝ նա այսպես է լինում: Բաց զրեքը զրեք հավելյալ լին-
դից կրկնակի կիզակետային հեռավորութեան վրա: Դիտակով
սկուլյարի միջով նայեցեք զրքին: Այժմ դիտակը գործում
է ինչպես սովորական հեռագիտակ: Յեթե տառերը պարզ
են յերևում, ապա սկուլյարը տեղն է: Յեթե վոչ՝ ուրեմն ա-
ռանց հավելյալ լինդը տեղից շարժելով՝ սկուլյարը քիչ մտտեցրեք
նրան կամ հեռացրեք նրանից, մինչև վոր տառերը պարզ յերևան:

Այդ զրութեան մեջ սկուլյարն ամբարցրեք:

Հավելյալ լինդը և սկուլյարը պարունակող խողովակը մըտ-
ցնում են դիտակի մարմնի մեջ:


Յերկրային առարկաների պատկերները խողովակում (դի-
տակում) կստացվեն որչեկախից զանազան տարածութեան վրա.
առարկան վորքան մոտ է, այնքան հեռու կլինի պատկերը դի-
տակում:

Դիտակն ուղղելով հեռավոր առարկայի (որինակ՝ ծառի, նա-
վի) վրա՝ աստիճանաբար դուրս քաշեցեք սկուլյարը պարունա-
կող ներքին խողովակն այնքան, մինչև վոր հեռավոր առարկան
պարզ յերևա:

Դիտակի ոգնութեամբ շատ կարևոր գլուտեր են արվել:
Գալիլեյը շատ շուտով նկատեց Լուսնի վրայի լեռները և տեսավ
Լուսնաթագ (Յուպիտեր) մոլորակի չորս արբանյակները:

Դիտակը ցույց տվավ «Թափառող աստղերի» — ինչպես առաջ-
ներում անվանում էին մոլորակները — և «անշարժ» աստղերի միջև
յեղած տարբերութիւնը: Դիտակում «Թափառող աստղերը» (մոլո-
րակները) յերևում են շրջանակների ձևով: «Անշարժ» աստղերը

4919-87




Նյ. 17



նույնիսկ ամենաուժեղ դիտակում շրջան չեն տալիս, այլ միայն ավելի պայծառ են դառնում:

Ինքնագործ հեռագիտակով աստղերը դիտելու համար պետք է մի հանդիստ տեղ ընտրել բակում կամ այգում, փոշոտ ճանապարհներից և ելեկարական լայտերներից հեռու. լայտերների լույսը թուլացնում է խողովակում պատկերի տեսանկյունը: Հեռագիտակով նայում են սովորաբար մեկ աչքով, իսկ մյուսը կկոցում են: Յերկար դիտողությունների դեպքում այդպիսի յեղանակը շուտ է հոգնեցնում: Պետք է սովորել նայել դիտակով



Նկ. 18

առանց մյուս աչքը փակելու: Միևնույն ժամանակ պետք է ուշադրությունը կենտրոնացված լինի միայն դիտակի միջնապատկերի վրա: Այսպիսի յեղանակը չի հոգնեցնում և թույլատրում է յերկար նայել դիտակով: Այդպես ել անում են իսկական աստղադիտարաններում:


Փոքր դիտակով ամենահետաքրքիր բանն է նայել Լուսնին: 50-60 անգամ խոշորացման դեպքում լուսնային մակերևույթի յուսավորված յեղրում յերևում են ողակաձև յեռներ: Լեռ-

նային ողակների ներսում յերևում է թույլ ձիթապտղի գույնով ներկված տափակ հարթություն: Յերկրի վրա այդպիսի սարեր չկան: Բացի ողակաձև յեռներից Լուսնի վրա յերևում են պայծառ կետեր և կետերի շղթաներ. դրանցից սև սավերներ են ընկնում: Իրանք սովորական յեռներ են, վոր մենք ճանաչում ենք նաև Յերկրի վրա: 18-րդ նկարում Լուսնի մակերևույթը պատկերացված է այնպես, յնչպես այդ յերևում է յնքնագործ դիտակով:

Լուսնին նայելը հարմար է Լուսնի յրումից առաջ և հետո: Լրման ժամանակ սովերներ չկան, և յեռները վատ են յերևում:

Լուսինը դանդաղ շարժվում է յերկնքով և ամբողջ ժամանակ հեռանում դիտակի տեսադաշտից: Ուստի հարկ է յինում դիտակը քիչ-քիչ պտտել:

Սակայն մի քանի բոպե յրբար հետևից կարելի յե նայել առանց դիտակին ձեռք տալու: Այդ ժամանակը կարելի յե ոգտագործել յուսնային յեռները նկարելու համար:



Նկ. 19

Այնպիսի ամպեր, յնչպես Յերկրի վրա յեն յինում, Լուսնի վրա չկան: Նշանակում է՝ այնտեղ վոչ ող կա, վոչ ել ջուր: Լուսնի վրայի մութ բծերը յերբեմն անվանում են «ծովեր», բայց դրանք անջուր ծովեր են:


Ինքնագործ դիտակով մյուս մոլորակներից կարելի յե դիտել Արուսյակը (Վեներան) և Լուսնիթաղը (Յուպիտերը):

Արուսյակ մուրակը յերևում է արևմուտքում՝ արեգակը մայր մտնելուց անմիջապես և արևելքում՝ արևածագից առաջ: Դրան կոչում են յերեկոյան և առավոտյան աստղ: Շատ պայծառ է այն և նույնիսկ կարող է Յերկրի վրայի առարկաներից ըստ վեր տալ:

Դիտակն ուղղելով Արուսյակին՝ կարելի չէ տեսնել մի կիսաշրջան կամ մանղաղ, միանգամայն ինչպես փոքրիկ լուսին:

Յերկնքում հեշտ է գտնել նաև Լուսնթագ մուրակը: Նա թվում է շատ պայծառ, չթարթող (չգողողացող) աստղ, Արուսյակից հետո ամբողջ յերկնքում ամենապայծառը:

Ինքնագործ դիտակով կարելի չէ տեսնել Լուսնթագ մուրակի շրջանակը, իսկ նրա կողքերին չորս փոքրիկ աստղեր: Միևնույն զծի վրա շարված աստղիկները Լուսնթագի արբանյակ-



Նկ. 20

ներն են, վոր Գալիլեյն է գտել: Նրանք պտտվում են Յուպիտերի շուրջը, ինչպես Լուսինը Յերկրի շուրջը:

Այդ մուրակը մի քանի սր իրար հետևից դիտելով՝ նկատում ենք, վոր Լուսնթագի արբանյակները փոփոխում են իրենց դիրքը. նրանք կամ ավելի մոտ են լինում Լուսնթագից, կամ ավելի հեռու, կամ բոլորովին թաղնվում են նրա հետևում:

Այդ մուրակի վրա շերտեր են յերևում: Դրանք ամպեր են մուրակի մթնոլորտում: Մուրակի իսկական մակերևույթն ամպերի խիտ շերտի հետևում թաղնված լինելով՝ մեղ չի յերևում (նկ. 19):

Յերկնքին մի փոքր ծանոթանալով՝ կարելի չէ գտնել Հրատ (Մարս) և Յերևակ (Մատուրն) մուրակները: Հրատը փայլում է չթարթող կարմիր լույսով և յերկնքում հեշտությամբ է գտնվում:

50—60 անգամ խոշորացնող խողովակով Յերևակը ձգված է թվում: Դա առաջանում է նրանից, վոր մուրակը շրջապատված է փայլուն ողակով:

Նույնպիսի խոշորացումով Արևի վրա կարելի չէ տեսնել այսպես կոչվող «արեգակնային բծերը»: Բայց հիշեցեք, վոր Արևին կարելի չէ նայել միայն հասուկ մթնոցրած կամ մրսած ապակիներով. առանց մթնոցրած ապակու Արևին մի անգամ նայելուց մտրդ վայրկեմապես կուռնում է:


Արեգակնային բծերը պատկերացված են 20-րդ նկարում:

Յեթե դիտակն ուղղենք աստղերի թույլ փայլող մի խմբի կամ Ծիրկաթինի ձերմակավուն մասերին, տեսադաշտում աստղերի մի բազմություն է յերևան գալիս: Սոսկ աչքով այդ աստղերը չեն յերևում. դրանք խիստ թույլ լույս են արձակում: Միայն դիտակն է նրանց տեսանելի դարձնում: Մի քանի աստղեր կրկնակի յեն թվում: Այդպիսի աստղ գտնվում է՝ որինակ՝ Մեծ Արջ համաստեղության պոչում:

Այդպես ընդարձակում է տեսանելի աշխարհի սահմանները մի փոքրիկ դիտակ, վորը շատ հեշտ է սեփական ձեռքով շինել:

Գծվար չե նաև ձեռքով մանրադիտակ շինելը:

Գնեցեք մի բարդ խոշորացույց, խոշորացույցի պատյանը նրբասղոցով կտրեցեք: Սոչորացույցի խողովակում յերկու ապակի կա: Մի ապակին հեշտ և հանել. խողովակի ներսում դրան պահում և մի լարե սղակ: Գրչահատ դանակով սղակը վոր հանեք, ապակին ել կընկնի: Դա կլինի մանրադիտակի որչեկտիվ: Մյուս ապակին կմնա խողովակում: Դա կլինի մանրադիտակի սկուլյարը (նկ. 21):



Նկ. 21

Որչեկտիվն ու սկուլյարը պետք է զնել խողովակի մեջ: Սողովակը պետք է շարժվի, վորպեսզի կարելի լինի սկուլյարը մտեցնել և հեռացնել որչեկտիվից: Դա կարելի չե շինել ձեռն աչնակս, ինչպես և՛ հեռադիտակ պատրաստելիս: Վերցրեք 2, 5—3 սմ արամագիծ ունեցող մի կլոր սովարաթղթե տուփիկ: Այդ տուփի հատակի մեջ տեղը բաց արեք մի ծակ ավելի փոքր արամագիծով, քան որչեկտիվի համար գործադրվող լինողը: Յերկու-յերեք սովարաթղթե շրջանակներ շինեցեք որչեկտիվի արամագիծի համեմատ և կպցրեք տուփի հատակին: Կստացվի մի խորություն,

ուր հարմար գետեզվում և որչեկտիվը: Վորպեսզի չընկնի այն, վրայից կպցրեք մի շրջանակ ևս մեջ տեղն ավելի փոքր ծակ, քան որչեկտիվի արամագիծը (նկ. 10 և 11): Այդպիսի մի ուրիշ տուփիկի հատակում կլոր ծակ բաց արեք լինողի արամագիծի համեմատ: Սովարաթղթից շինեցեք մի քանի շրջանակներ մեջ տեղը խոշորացույցի պահունակի արամագիծի համեմատ ծակերով և դրանք կպցրեք տուփի հատակին: Կստացվի մի խորություն, ուր հեշտ կլինի սկուլյար զնելը (նկ. 13):

Այժմ պետք է վորոշել որչեկտիվի հեռավորությունն սկուլյարից: Վերցրեք մի նեղ քանոն և թելով ամրացրեք նրան որչեկտիվը պարունակող տուփը: Գլխավոր կիզակետից շատ քիչ հեռու քանոնի վրա մի գնդասեղ խրեցեք: Հիմա մտիկ արեք սկուլյարի միջով՝ հեռահեռա շարժելով այն դեպի որչեկտիվը (նկ. 22):




Նկ. 22

Յերբ տեսադաշտում պարզ կերևա խոշորացված գնդասեղը, քանոնից կորոշեք մանրադիտակի իրանի յերկարությունը:

Իրանն այսպես շինեցեք: Որչեկտիվը պարունակող խողովակը պատեցեք բարակ սովարաթղթով և կպցրեք ամբողջ յերկարությամբ: Դիտակ կստացվի: Ներսը ներկեցեք սև ներկով կամ տուշով:


Իրանի յերկարությունն արդեն վորոշվել է քանոնով: Իրանի մյուս ծայրը հրեցեք սկուլյարը պարունակող խողովակը: Մանրադիտակի իրանը պատրաստ և: Պետք է այն զնել շտատիվի (նեցուկի) վրա: Դիտվող առարկաների համար պետք է մի փոքր սեղան շինել: Մանրադիտակի իրանը, փոքրիկ սեղանը և մի փոքր հայելի, վորը գործադրվում և դիտվող առարկան յուսավորելու համար, ամրացնենք մի քանոնի վրա: Փոքրիկ սեղանը մի քառակուսի տախտակ է մեջ տեղը փոս արած, վորտեղ դնում են ապակի զննող առարկայի հետ միասին: Փաներայից շինած յերկու անկյունարդով, վորոնք կցված են սեղանի կողերին և քանոնին, սեղանն ամրացվում է (նկ. 23):

Փոքրիկ հայելին ամրացվում է սեղանի տակ նրանից 5-6 սմ հեռավորության վրա: Նա պետք է պտտվի հորիզոնական առանցքի շուրջը, վորպեսզի լույսն ուղղվի դիտվող առարկայի վրա: Դա կարելի չէ այսպես անել. մանրադիտակի սեղանի տակ կըպցրեք մի շրջանակ. շրջանակի ներսում հորիզոնական առանցքի վրա կպտտվի փոքրիկ հայելին: Հայելին առանցքին են կպցնում մի կտոր շորով, վորին սոսինձ է քաված: Առանցքի ծայրերն անցնում են շրջանակի կողի պատերի միջով (նկ. 24):



նկ. 23


Փանոնը հայելու և սեղանի հետ միասին սոսնձեցեք շտատիվի վտտի շեղ հատվածին (նկ. 25):



նկ. 24



նկ. 25




նկ. 26

Մանրադիտակի իրանն անշարժ և մնում քանոնի վրա, բայց հեցը թույլ և տալիս նրան քանոնի յերկարությամբ վեր ու վայր շարժվել (նկ. 26):

Չննվող առարկան կանազական բալասանով կպցնում են ապակուն: Ապակին գնում են սեղանին որչեկտիվի տակ: Ապակին սեղանի վրա պետք և լինի որչեկտիվի գլխավոր կիզակետից շատ քիչ հեռու: Հայելին առանցքի շուրջը պտտելով՝ լույսն ուղղեցեք ապակու վրա: Նայեցեք սկուլյարի միջով և թեթևակի ներս տարեք ու դուրս բերեք այն, մինչև վոր առարկան պարզ կերևա:

Կարելի չե փորձել մի քիչ մոտեցնել մանրադիտակի իրանն ապակուն: Դրանով կարելի չե ավելի մեծ խոշորացում ձեռք բերել:

Մանրիկ միջատները, բրդի, բամբակի մազմուկները կարելի չե դիտել առանց առանձին պատրաստությունների: Հարկավոր և միայն դրանք կանազական բալասանով կպցնել առարկայի ապակուն և գնել մանրադիտակի տակ:



նկ. 27

Քուսական հյուսվածքների, որինակ՝ փայտի կառուցվածքը տեսնելու համար պետք և ածելիով կտրել հյուսվածքի մի շատ բարակ շերտ: Շերտը պետք և թափանցիկ լինի:

Հյուսվածքի մի փոքրիկ կտոր կպցնում են առարկայի ապակուն: Այդպիսի կտորը կոչվում և պրեպարատ (պատրաստուկ): Ոգտակար և լինում պրեպարատը ներկել: հյուսվածքի կառուցվածքի առանձին մասերն այդ դեպքում ավելի լավ են յերևում:

Այսպես կարելի չե գննել խնձորի, ձմերուկի, փայտի, դանազան բանջարեղենների հյուսվածքը:

Հյուսվածքները մանրադիտակով գննելով՝ կարելի չե տեսնել այն առանձին բջիջները, վորոնցից նրանք բաղկացած են: Մանրադիտակով կարելի չե տեսնել բույսերի մազիկները (նկ. 27):

Մանրադիտակը ջրի կաթիլի մեջ մեր առջև բաց է անում նույնպիսի մի անսահման աշխարհ, ինչպիսին հեռադիտակն աստղամիջյան տարածություններում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ուստիկական ապակիներ	3
2. Ինքնագործ հեռագրիտակ	11
3. Ինքնագործ մանրաղիտակ	22

Գտտ. խմբագիր՝ Հ. Սարգսյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբաղյան

Գլավիտի լիազոր Ա.—3094 Գատիկեր 209
Հրատ. 4533. Տիրած 2000.
Թուղթ 62×94 սպ. 1³/₄ մամ.
Մեկ մամ. 38. 400. նիշ.

Հանձնված է արտագրության 27 փետրվարի 1938 թ.
Ստորագրված է տպագրության 17 մայիսի 1938 թ.

Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի 65

Ա. 1988
ԱՊՐ 1101
ՅԱՐՅԱՆ. Պ.

«Ազգային գրադարան



NL0148743

